ԵՐԿԸՆՏՐԱՆՔ ՉԻ ԿԱՐՈՂ ԼԻՆԵԼ

Ինչպես հայտնի է, հոկտեմբերի 20-ին ՏԱՍՍ-ը իր հաղորդագրության մեջ հայտնեց, որ ԽՍՀՄ Գերագույն խորհըրդի նախագահության նիստում Ազգությունների խորհրդի ազգային քաղաքականության և ազգամիջյան հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Գ. Ս. Տարազևիչը տեղեկացրեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզում դեպուտատական հանձնաժողովի աշխատանքների արդյունքների մասին: Հանձնաժողովը, համակողմանիորեն ուսումնասիրելով ռեգիոնի իրավիճակը, մտցրեց ստեղծված դրության կարգավորմանն ուղղված մի շարք առաջարկություններ: Տեղի ունեցած բանավեճի ընթացքում մշակվել են պրոբլեմի քաղաքական լուծմանը ուղղված առաջարկություններ, որոնք հանձնվել են Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին և Լեռնային Ղարաբաղից ընտրված ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատներին:

Խմբագրությունից հեռախոսով կապվեցինք ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ, գրող ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆԻ հետ և խնդրեցինք մեկնաբանել այդ հաղորդագրությունը, որը բազմաթիվ խոսակցություններ է ծնել հանրապետությունում:

— Ամենից առաջ, եթե կարելի է, մի քանի խոսք «Բայկալյան շարժում» միջազգային-գոյապահպանական կազմակերպության շրջանակներում Ճապոնիայի Բիվա լիճ կատարած ձեր այցելության մասին: Չէ՞ որ դուք այդ այցին, որպես միջազգային կազմակերպության համանախագահ, վաղուց էիք պատրաստվում:

— Իմ կյանքում բախտը հաճախակի ու շատ չի բերել, բայց այնպես, ինչպես հիմա եղավ, դժվարանում եմ հիշել: Մեր գիտաժողովի ժամանակը համընկավ այն օրերի հետ, երբ մենք բոլորս օրեցօր սպասում էինք Գերագույն խորհրդի նիստին, որում պիտի քննարկվեր Ղարաբաղի հարցը: Եվ ես, իհարկե, չէի մեկնի, եթե զգայի, որ նիստին չեմ հասնի: Հասկանում էի և այն, որ որպես «Բայկալյան շարժման» կազմակերպիչներից մեկը, պատասխանատվություն եմ կրում իմ խորհրդային և արտասահմանյան գործընկերների առջև: Կապվեցի ճապոնացիների հետ: Իմացա, որ հոկտեմբերի տասնվեցը գլխավոր օրն է, երբ իմ առաջարկությամբ ՄԱԿ-ի հասցեով հայտարարություն պիտի անեին, ընդ որում, հայտարարության տեքստն էլ էի ես նախապատրաստել, և որոշվեց, որ թռչելու եմ Վալենտին Ռասպուտինի, Իմանտ Զիեդոնիսի, Վասիլի Բելովի հետ միասին: Ամսի 16-ին ես հանդես եկա զեկուցումով: Ի դեպ, նրա դրույթները հրապարակվել էին «Խորհրդային Հայաստան» թերթում: Դրանցում տեղ էին գտել մի շարք սխալներ՝ իմ մեղքով: Որոշ հաշվարկներ կատարվել էին, ելնելով ոչ միայն մակերեսային ջրագրահամ ջրերի ցուցանիշներից: Այդ մասին ուզում եմ նշել, որպեսզի ընթերցողները, եթե հանկարծ դրանք հայտնաբերեն, չմեղադրեն իմ կողմից հարգված թերթը: Դե, դա, այսպես ասած, ի միջի այլոց: Զեկուցումից և ընդունված հայտարարությունից հետո, որը կտպագրվի մամուլում, գիշերով ես Կիոտոյից մեկնեցի Տոկիո, իսկ այնտեղից էլ՝ Մոսկվա: Ճապոնիայի հասարակայնությունը հետաքրքրվում էր մեր երկրում ստեղծված իրավիճակով, մասնավորապես, իրենց լավ ծանոթ ղարաբաղյան պրոբլեմով: Այս հարցի շուրջ, այս խնդրին վերաբերող բազմաթիվ հարցազրույցներ, մամուլի ասուլիսներ, հեռուստատեսային և ռադիոհարցազրույցներ ունեցա այնտեղ: Մեր պատվիրակությունը դեռ հինգ օր մնաց այնտեղ: Գլխավորն այն է, որ ես հասցրեցի լինել և այնտեղ՝ աշխարհի ծայրում և այստեղ՝ մայրաքաղաքում, որտեղ ինձ սպասում էին իմ ընկերները՝ Ղարաբաղից ընտրված դեպուտատները: Մենք ամբողջ երեք օր միասին պատրաստվում էինք նիստին:

Բուն նիստի մասին ոչինչ չեմ կարող ասել: Կարծում եմ, որ դա այնքան էլ բարոյական չի լինի: Մեզ ոչ ոք չի նախազգուշացրել, թե չի կարելի հրապարակել այն ամենը, ինչ այնտեղ ասվել է ավելի քան երեք ժամվա ընթացքում, Բայց, այնուամենայնիվ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագահությունը, ինչպես և ենթադրվում էր, որոշեց հարցը մտցնել Գերագույն խորհրդի նստաշրջան, ինձ թվում է, թե իմաստ չունի մանրամասների մեջ մտնել: Սպասենք նստաշրջանին: Նիստը վարում էր Մ. Ս. Գորբաչովը: Ելույթ ունեցան Ղարաբաղից ընտրված բոլոր դեպուտատները, այդ թվում նաև Ա. Վոլսկին և Վ. Ջաֆարովը: Տարեգրությունը, ինչպես ասվում է, գրվում է: Վաղ թե ուշ կհրապարակվի այն ամենը, ինչ այնտեղ ասվեց: Ելույթ ունեցան երկու հանրապետությունների գերագույն խորհուրդների նախագահները: Եզրափակիչ խոսքով հանդես եկավ Մ. Ս. Գորբաչովը:

Կարող եմ ասել, որ թե՛ Հենրիխ Պողոսյանը, թե՛ Վահան Գաբրիելյանը, թե՛ Վաչագան Գրիգորյանը և թե՛ Բորիս Դադամյանը (ես թվարկեցի այն հերթականությամբ, որով նրանք ելույթ ունեցան: Ես առաջինը ելույթ ունեցա) մեկը մյուսին լրացնելով լիովին բացահայտեցին ռեգիոնում ստեղծված իրադրության ամբողջ պատկերը: Նրանք բոլորն էլ գրված տեքստեր ունեին, բայց գործնականում տեքստերին չէին նայում: Ինձ իրավունք եմ վերապահում սոսկ մի փոքրիկ մեջբերում կատարել Վաչագան Գրիգորյանի ելույթից. «Դուք ղարաբաղցիներին չեք ճանաչում: Այս ժողովուրդը ամեն ինչի կդիմանա, բայց միևնույն է՝ չի հանձնվի: Նա ամեն ինչի սովոր է: Եվ Ղարաբաղը նրա համար ոչ թե տարածք է, այլ՝ հայրենիք»:

Պատասխանեցին բազմաթիվ հարցերի: Իրենք էին հարցեր տալիս ելույթ ունեցողներին: Առաջարկություններ արեցին: Մնում է, որ նույնքան լրջորեն և ծանրաբարո կերպով վարվեն բավականին բարդ բանավեճերը նաև մի շաբաթից կայանալիք ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առաջիկա նստաշրջանի նիստում: Իսկ ինչ վերաբերում է ՏԱՍՍ-ի հաղորդագրությանը, ապա, անկեղծ ասած, ես մեկնաբանելու բան չունեմ: Այնտեղ պարզապես ասված է այն, ինչը ընդհանրապես չի եղել: Ասված է այն մասին, որ, իբր, խնդրի քաղաքական կարգավորման վերաբերյալ բանավեճերի ընթացքում մշակված առաջարկությունները հանձնվել են Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին և Արցախից ընտրված ժողովրդական դեպուտատներին: Մեզ ոչինչ էլ չեն հանձնել: Ասենք՝ հանձնելու բան իսկի չկար էլ: Այնպես որ, վստահ եմ, Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին նույնպես ոչինչ չեն հանձնել: Ասենք՝ ի՞նչը հանձնեին, եթե որոշվեց, որ նախագիծը վերամշակվի՝ հաշվի առնելով այն ամենը, ինչ ասվեց նիստում և հանձնվի Գերագույն խորհրդին: Ուրիշ ոչինչ:

Մենք հոգնել ենք ստից: Մեկ և կես տարի է մարզը շրջափակման մեջ է: Արյուն է հեղվում: Հարցի լուծումը հետաձգվում է ցանկացած պատրվակով: Ինչ արած, կսպասենք ևս մեկ շաբաթ: Մենք նիստի ավարտին խնդրեցինք միայն, որպեսզի հարցը Գերագույն խորհուրդ մտցնելուց առաջ մեզ ծանոթացնեն արդեն վերամշակված նախագծին: Մեզ դա խոստացան:

ՏԱՍՍ-ի հաղորդագրության առընչությամբ մեզ «Ժամանակ» ծրագրի հաղորդումից անմիջապես հետո բազմաթիվ հեռախոսազանգեր եղան: Ես արդեն վարժվել եմ այս ամենին: Ինչ-որ մեկը շատ է ցանկանում, որպեսզի իրադրությունը միշտ լարված պահի, որպեսզի մեր հայրենակիցների վերքի վրա էլ ավելի շատ աղ ցանի, նրանց պրովոկացիայի դրդելու միտումով: Մի՞թե այս գրեթե երկու տարվա ընթացքում չհասկացան, որ մենք պրովոկացիաների չենք ենթարկվում: Պրովոկացիայի չենթարկվեցինք նույնիսկ երկրաշարժի ողբերգությունը, շրջափակման ծանր հոգեվիճակը ապրելուց հետո: Ինձ վրա չվերցնելով Գերագույն խորհրդի նիստից յուրատեսակ հաղորդում տալու իրավունքը, միաժամանակ պատասխանելով հերթական պրովոկացիոն լրատվությանը, ընթերցողների ուշադրությանն եմ առաջարկում՝ իմ ելույթի տեքստը՝ որոշ կրճատումներով:

Զ. ԲԱԼԱՅԱՆԻ ելույթը

Այն մակարդակը, որով այժմ քննարկվում է Ղարաբաղի հարցը, այսպես ասած, ողբերգականորեն ձգձգված գործընթացի այս փուլը, թվում էր, իսպառ բացառում է երեկվա օրը վկայակոչելու ցանկացած փորձ: Մեզ՝ ղարաբաղցիներիս համար առավել ևս վիրավորական է նույնիսկ խոսակցությունը, էլ չեմ ասում կասկածը այն մասին, թե ո՞ւմ են պատկանում Ղարաբաղի հազարամյա քրիստոնեական տաճարները: Մեզ բոլորիս այսօրն է հուզում, որովհետև արյունը այսօր է հեղվում: Մեզ վաղվա օրն է հուզում, Քանզի Սումգայիթը, շրջափակումը, ինքնիշխանության մասին սահմանադրական օրենքը, հայերի բռնագաղթը պարզապես սպանում են վաղվա օրը հարազատ երեխաների հետ սեփական տանը, սեփական հողի վրա ապրելու հնարավորության բուն հույսը: Ապրել, բնական անհանգստություն արտահայտելով թոռների ճակատագրի և սեր՝ հայրական շիրիմների նկատմամբ:

Ինձ ընդհանրապես անհասկանալի է, թե ի՞նչ է կատարվում մեզ մոտ: Մարդիկ նախնադարյան կազմավորումների հորձանուտի միջով անցել են պետության, որպեսզի պաշտպանված լինեն պատուհասներից և ներխուժումներից: Այսօր, անցնելով մեծագույն տառապանքների, հազարավոր փորձանքների և դառնությունների միջով, մենք ասես կրկին ընկել ենք քարանձավային մարդու վիճակի մեջ, որը կարող էր սառնամանիքին սառչել բաց երկնքի տակ, կարող էր սպանվել վարանում չիմացող վայրենիների ձեռքով: Այն տպավորությունն է ստեղծվում, որ ասես դրսում քսաներորդ դարի վերջը չէ, ասես մարդկությունը դեռ չի ճանաչել քաղաքակրթության էությունն ու իմաստը, ասես մենք չենք ապրում Նախկին Ռուսաստանյան պետության մեջ՝ իր ոսկե տասնիններորդ դարով, Դոստոևսկու բարոյականությամբ, Տոլստոյի մարդասիրությամբ: Եվ հանկարծ Սումգայիթ, հանկարծ շրջափակում, հանկարծ հայկական ինքնավար ազգային կազմավորման՝ Նախիջևանի հանրապետության լիակատար ֆիզիկական վերացում, մահ: Բայց չէ՞ որ այս մասին ոչ մի խոսք ոչ մի տեղ, ոչ մի մակարդակով չի ասվում: Բայց չէ՞ որ բոլորն էլ հրաշալի գիտեն, թե դա ինչպե՞ս կատարվեց: Գիտեն, թե ինչո՞ւ հայկական հողն իր անդրբնածին բնակչությամբ հանձնվեց հենց նոր միայն կազմավորված Ադրբեջանական ԽՍՀ-ին: Գիտեն, որ այսօր այնտեղ ոչ մի հայ չի մնացել: Ոչ մի: Որ ոչնչացվել են բոլոր քրիստոնեական տաճարները, եկեղեցիները, շիրիմները, դամբարանատեղերը: Եվ այս ամենը մի սերնդի աչքերի առաջ: Այս ամենը՝ անպատիժ կերպով: Թեպետ, թըվում էր, հատուցման համար և՛ օրենք կա, և՛ հիմք: Կա ցեղասպանության և մարդկության դեմ գործված այլ ոճրագործությունների համար պատժելու մասին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի հռչակագիր, որի մեջ ընդգծվում է, թե ցեղասպանությունը ոչ միայն ժողովրդի կամ նրա մի մասի ֆիզիկական ոչնչացումն է, այլև կյանքի այնպիսի անտանելի պայմանների ստեղծումը, որի ժամանակ անդրբնածին բնակիչները ստիպված են լինում թողնել հարազատ վայրերը: Այս միջազգային օրենքը մեր Գերագույն խորհուրդն ընդունել է դեռևս 1954 թվականին: Եվ, այնուհանդերձ, հանցագործությունը չի դատապարտված, հանցագործները չեն պատժված:

Եվ, չգիտես ինչու, ոչ ոք չի ուզում հասկանալ, որ Ղարաբաղը հենց նրա համար է իր, հիրավի, հեղափոխական բողոքն արտահայտել, որ նրան նույնպես սպասում էր Նախիջևանի ողբերգական ճակատագիրը: Ի դեպ, մինչև այժմ էլ չենք կարողանում հասկանալ, թե ինչո՞ւ երկու հայկական ազգային կազմավորումներն էլ կոչվում են ոչ թե ըստ իրենց ազգային հատկանիշի, այլ՝ աշխարհագրական:

Այս ամենը արվել և արարվել է խորհրդային կարգախոսներով: Այս ամենի գիտակցումը և, առաջին հերթին, բացարձակ անպատժելիության գիտակցումը վաղվա օրվա նկատմամբ ո՛չ հույս է թողնում, ո՛չ լավատեսություն: Եվ դրա համար էլ դժվար է պատկերացնել, թե առաջարկված նախագիծը կարող է թեկուզ դույզն ինչ լուծել խնդիրը, վերացնել լարվածությունը: Չէ՞ որ նրանում ոչ մի երաշխիք չկա, որ ռեգիոնում ոճրագործություններ չեն կատարվի, որ «սումգայիթը» չի կրկնվի, որ կըվերացվի Ղարաբաղի և Շահումյանի շրջանի շրջափակումը: Եվ բանն այստեղ այն չէ, թե մենք որևէ մեկին հավատում ենք, թե չենք հավատում, բանն այն է, որ մենք կյանքը գիտենք և գիտենք փաստերը:

Սոսկ մի քանի քաղվածք Ադրբեջանի, այսպես կոչված, ազգային ճակատի առաջնորդներից մեկի և Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Վեզիրովի ելույթներից:

Առաջին մեջբերումը վերցված է «Ալ Բայան» թերթից (Աբու Դաբի, ՄԱԷ):

«Մենք դարձել ենք ադրբեջանցի թուրքերի քաղաքական կազմակերպություն... Մենք հաստատում ենք մեր ինքնիշխանությունը և պիտի կոչվենք Ադրբեջանի թուրքական ժողովրդավարական հանրապետություն: Սա ութ միլիոն ադրբեջանցի թուրքերի ձգտումն է: Թուրքիան մի պատուհան է, որը նայում է դեպի Արևմուտք»:

Եվ այնուհետև նա կարծում է, որ այսօրվա Ադրբեջանը մի նպատակ ունի՝ ստեղծել մեծ Թուրքիա, որը միավորի ԽՍՀՄ բոլոր թյուրքական ժողովուրդներին: Դրա համար, անշուշտ, ամենից առաջ պետք է ոչընչացնել հայերին: Նման ցնորական գաղափարների հիմքում, անտարակույս, ընկած է Թուրքիայի սահմանադրությունը:

Սակայն այսպես են մտածում ոչ միայն առաջնորդները ազգային ճակատի, որը Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանում հռչակվեց որպես վերակառուցման բուն էության արտահայտիչ: Կատարեմ նաև երկրորդ մեջբերումը: Այն վերցված է այն նույն նստաշրջանում Հանրապետության կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղարի ունեցած ելույթից. «Եթե միասնական չլինենք, չփենք միևնույն կետին, ոչինչ չի ստացվի: Չէ որ Ադրբեջանի նման պետություն ոչ մի տեղ չկա: Ադրբեջանցի փախստականները բոլորն էլ մեր հանրապետություն են եկել, իսկ հայերը՝ ով-որտեղ: Դուք հասկացա՞ք, թե ինչ եմ ուզում ասել: Էլ ո՞նց կլինի՝ նավթն ո՞ւր է գընացել, բամբակն ո՞ւր է գնացել: Դատարկ բան է այդ ամենը: Իսկ հայերը՝ ով-որտեղ... Նորովի պետք է գրել 70-րդ հոդվածը: Կձևակերպենք այսպես, որ հանրապետության հողն ու տարածքը անբաժանելի են, այսինքն՝ ինչպես Թուրքիայի սահմանադրության մեջ է»:

Ինչպես տեսնում եք, կուսակցական կազմակերպության ղեկավարը նույնիսկ շատ լավ է ձայնակցում ազգային ճակատի ղեկավարին, ազգային ճակատի անդամները՝ Վեզիրովի և Կաֆարովի ներկայությամբ, նստաշրջանում, բուռն ծափահարությունների ներքո, հայտարարեցին. «Ազգային ճակատը թույլ չի տալիս Հայաստան և ԼՂԻՄ տարանցիկ բեռներ փոխադրվել, քանի դեռ նրանք ներողություն չեն խնդրել»... «Մենք գտնվում ենք պատերազմական վիճակի մեջ, սա պետք է բոլորն իմանան»... «Թշնամու հետ չի կարելի բարեկամություն անել»:

Ներկա փուլում մենք ինչպե՞ս ենք ուզում հաշտեցում իրականացնել, եթե բոլոր ղեկավարների ներկայությամբ բանաստեղծի շուրթերով, այսպես կոչված, ողջ Ադրբեջանի թուրքական հանրապետությունով մեկ հայտարարվում է՝ «Թշնամու հետ չի կարելի բարեկամություն անել»:

Մի՞թե մենք չենք տեսնում, որ ցավամոքիչ ցանկացած լուծում վըտանգավոր է: Հարցը պետք է լուծել միայն արդարության, մարդասիրության հիման վրա, առանց որոնց անհնար է կենսագործել «Ավելի շատ սոցիալիզմ» սկզբունքը: Միասնական պետության շրջանակներում չի կարելի թույլ տալ, որ ժողովրդի մի մասը կտրված լինի միևնույն ժողովրդի մյուս մասից: Ի՞նչ հաշտեցման մասին կարող է խոսք լինել, եթե Ադրբեջանի ղեկավարները չեն ցանկանում, որ, այսպես ասած, իրենց սահմաններում օգնեն Շահումյանի շրջանի հայերին ապրելու Լեռնային Ղարաբաղի հայերի հետ համատեղ: Մի՞թե հիմա էլ են ցանկանում հայկական դպրոցներ առաքել ադրբեջանական դասագրքեր, ոչ սեփական ժողովրդի պատմագրքեր:

Նման նախագիծը, եթե այն նույնիսկ ընդունվի Գերագույն խորհըրդի կողմից, անմիջապես կդառնա մեռելածին պտուղ: Հարկավոր է մտածել այն մասին, որ չլինեն հաղթողներ և պարտվողներ, այլ հաղթի ճշմարտությունը, առողջ բանականությունը: Չի կարելի մի ամբողջ ժողովուրդ պատանդ պահել շրջափակված, պաշարված կզգյակում և համարել, որ մենք իմաստուն, գրեթե սողոմոնյան որոշում ենք գտել: Ի դեպ, եթե հիշում եք, աստվածաշնչյան Սողոմոնն իր իմաստությամբ այնուամենայնիվ մորը վերադարձրեց իր երեխային:

...Իսկ այժմ մի քանի խոսք մանրամասների մասին:

Այսպես շարունակել այլևս անհնար է: Մենք մեզ նույն երկրի քաղաքացիներ, միասնական և ամբողջական պետության քաղաքացիներ չենք զգում: Չէ՞ որ երեք հարյուր տարի առաջ կենսագործելով հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման գաղափարը, մենք միասնական պետության մեջ մտանք ոչ նրա համար, որ գտնվենք մի հանրապետության կազմում, որը վիրավորում է մեր ժողովրդի ազգային արժանապատվությունը, քողարկվելով լենինյան ազգային քաղաքականության կարգախոսներով:

Մի՞թե դուք չեք տեսնում, որ նախագիծը, որն այսօր առաջարկվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության ուշադրությանը, մեռելածին պտուղ է: Մի՞թե չեք տեսնում, որ այս բոլոր կիսամիջոցները, ցավամոքիչ որոշումները սոսկ բարդացնում են խնդիրը, սրում իրավիճակը: Ես չեմ ուզում արդարացնել մեզ, չեմ ուզում մեղադրել ուրիշներին: Ես իրադրության մասին եմ խոսում, որն ստեղծվել է ռեգիոնում: Ահա տեսեք, թե ինչ է ստացվում: Առաջ՝ կոմիտեի ժամանակ, ինչպես մենք ենք անվանում՝ Վոլսկու կոմիտեի ժամանակ, շատ ավելի տրամաբանական էր: Կազմը՝ կենտրոնի ներկայացուցիչներ: Մեկ ադրբեջանցի: Երկու հայ: Սա արդեն ելել են այն բանից, որ բնակչության ութսուն տոկոսը հայեր են, քսանը՝ ադրբեջանցիներ: Իսկ այժմ նախագծում գրված է, որ արտակարգ հանձնաժողովի կազմի մեջ պետք է մտնի նաև Ադրբեջանական ԽՍՀ ներկայացուցիչը: Դե ինչո՞ւ բանը նախօրոք հանգեցնել առճակատման: Ի՞նչ կստացվի իրականում: Եթե մենք նման որոշում նույնիսկ ընդունենք էլ, ապա Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն այն չի ընդունի: Նրանք ոչ կուսակցության մարզկոմի, ոչ էլ մարզային խորհըրդի ընտրություններ չեն անց-

կացնի: Ինչո՞ւ այնպես անել,
վարկաբեկվի Գերագույն խոր
որոշումը:
Ինչպե՞ս կարելի է ընդհա
պես հարցը լուծելու փորձ ա
շրջափակման
վրա:
Չէ՞ որ սա արդեն
է տեսում: Սարսափելի է,
բայց պետք է ասել՝ հայ
դեղորայք չկա: Եվ բոլորը
են: Մենք այստեղ երաշխի
մասին ենք խոսում, իսկ եր
խիքն այնտեղ է: Այնտեղ գտն
են Շահումյանի շրջանը և Գե
շենի ենթաշրջանը:
Երկրում ճգնաժամ է: Ես
գործընկերների հետ միասին
ժամանակակիցների հետ միա
ինձ համարում եմ վերակառուց
ման մաճկալ: Քսան տարի
ժերիս ներածին չափով հրա
րակախոսորեն մշակել եմ
մաթիվ խնդիրներ: Եվ այժմ
կուզենայի, որ Գերագույն խ
հըրդի նստաշրջանի նիստ
գործունորեն շարունակեն
այդ նույն թեմաները, գա
ղափարներ կենսագործելով:
դա անհնար է: Իմ հայրենի
արյուն է հեղվում: Հարկավոր
ոչ թե խոսքով երաշխիքներ,
այն բանի իրական զգացում,
մենք ազատ քաղաքացիներ
ապրում ենք ազատ և ժողով
կան պետության մեջ, պա
պանված ենք իրավական պ
թյան օրենքներով: Հարցն
պես լուծենք, որպեսզի կրկին
բաղառնանք Ղարաբաղին,
գի չասեն, թե Ղարաբաղը
բակառուցմանը խանգարում է
Դաժան Ստալինը մի
ուներ: Մարդը չկա՝ նրա հա
չկա: Հետո նա այն ընդլայ
չկա ժողովուրդ, չկա և նրա հա
ցը: Այդպես եղավ Նախիջև
հարցում: Բայց այսօր եթե նո
նիսկ ոչնչացնեն Ղարաբաղ
հազար հայերին, ապա մեկ
բան դուրս չի գա: Ղարաբաղ
վերածվելու է Փլյունիկ
նման:

•

Պետք է հասնել այն անվ
թության վերացմանը, երբ միա
նական պետության մեջ հայ
կան միութենական հանրապետ
թյան կողքին գտնվում է հայ
կան ինքնավար մարզը: Մենք
մոտ են գտնվում: Բայց ոչ մի
սին: Եթե ստեղծված իրավ
թյան մեջ՝ ի խախտումն ինք
րոշման լենինյան սկզբունքի,
ռայժմ չեք կարող խնդիրը լուծ
ապա հարկավոր է անվերապա
րեն ենթարկել կենտրոնին: Ե
մենք խոսում ենք փոխզիջմ
մասին, ապա կենտրոնին ենթար
կելը հենց այդ փոխզիջումն է

ԱՐՑԱԽԸ ԲՈՂՈՔՈՒՄ Է

Բողոքում է կիսատ-պռատ, օրենք չդարձող օրենքի նախագծի, զենքի անօրեն կիրառման, օրենքից դուրս կիրառվող մեթոդների, օրենքի չենթարկվող շրջափակման փաստի, քաղաքացիական էս պատերազմը չսանձող օրենքի և արդեն երկրորդ տարին ընթացող այդ նույն պատերազմը չհայտարարող օրենքի, Ստեփանակերտը Հադրութի հետ կապող կամրջի համար, ընդդեմ, հանուն...

Արցախը հավաքվել է այս անգամ արդեն «արյունոտ հոկտեմբերի 10-ին» զինվորական ստորաբաժանումների (նահանջող, թե՞ հարձակվող) անօրեն հրաձգություններից զոհված Սպարտակ Հակոբյանի հուղարկավորության առիթով: Ի՞նչ. մի քայլ էլ ազատության մարաթոնյան ճանապարհին, թե՞, ևս մի քայլ օրինապահ պետության գիրկը...

Զ. ԽԱՉՅԱՆ